

# ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

«Իրավաբանական Լրատուն» պարբերական է, որը  
նպաստում է արդի իրավական մշակույթի ձևավորմանը

Տպագրվում է 2006թ.  
հունիսից  
2006 թվական  
թիվ 2  
հունիս

Արդարադատության հաստատումը ցանկացած երկրի զարգացման, ժողովրդավարության հաստատման և հզորացման հիմնական գրավականն է:

Վերջին շրջանում Հայաստանում տեղի ունեցան օրենսդրական փոփոխություններ, որոնք կարելի է համարել սկզբունքային առկա դատական համակարգի համատեքստում: Դատական համակարգը գնում է դեպի մասնագիտացում, որը կարելի է դրական համարել՝ բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ դատական քննություն ապահովելու և դատական ակտերի որակը բարձրացնելու առումով: Սակայն, մեր կարծիքով Հայաստանի Հանրապետության դատական համակարգի առկա բացասական երևույթների լիարժեք առողջացման համար մակերեսային միջամտությունները բավարար չեն և չեն կարող հանգեցնել այն ցանկալի արդյունքին, որին սպասում ենք՝ ի նկատի առնելով անկախ դատական համակարգի ապագայի մտապատկերը:

Ուստի և շատ կարևոր է, թե ում կվստահվեն դատական համակարգի բարեփոխումները:

## ԼՐԱՀՈՍ

### ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ԵՎՍ ՄԵԿ ՓՈՒԼ

2006թ.-ի հունիսի 26-ին հրավիրված ասուլիսում արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը ներկայացրեց դատաիրավական փոփոխությունների հայեցակարգի հիմնական մտտեցումները, որոնք արդեն իսկ ամրագրված են համապատասխան օրենսդրական նախաձեռնությունների տեսքով: 2006թ.-ի հունիսի 26-ին նշված փոփոխությունների մի մասը հրապարակվել են, որը ուժի մեջ կմտնի տաս օրից: Ծարունակությունը՝ էջ 3-ում:

### ՀԱՄԱՆԵՐՈՒՄ

Սույն թվականի հունիսի 7-ին, քննարկելով ՀՀ անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ՀՀ նախագահի առաջարկությունը, ՀՀ Ազգային Ժողովը միաձայն ընդունեց «Համաներում հայտարարելու մասին» որոշումը: Որոշումը ուժի մեջ կմտնի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

### ՄԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԸ ԳԱՐՉԱՎ ՄԱՏՉԵԼԻ

2006թ.-ի հունիսի 4-ին, առավոտյան ժամը 09.00-ին ՀՀ Սահմանադրական դատարանը ստացել է անհատ քաղաքացու կողմից իրեն հասցեագրված առաջին դիմումը: 2006թ.-ի հունիսի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ փոփոխված Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետը, որով յուրաքանչյուր ոք կոնկրետ գործով իրավունք է ստանում դիմել Սահմանադրական դատարան, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը: Առաջին դիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացի Արտակ Զեյնալյանի կողմից, որը Սահմանադրական դատարանում վիճարկում է ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասը՝ դատարանից խնդրելով Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել այն: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող հոդվածը այն դրույթն է, որի հիման վրա ընդհանուր իրավասության դատարանները հրաժարվում են քննության առնել ՀՀ կառավարության որոշումները, նախագահի հրամանագրերը և կարգադրությունները անվավեր ճանաչելու պահանջով դիմումները:

մարդկանց, ովքեր մասնագիտացված դատարաններում արդարադատություն են իրականացնելու համուն Հայաստանի Հանրապետությունում իրական արդարադատության հաստատման, թե՞ մարդկանց որոնց գործելակերպը, մասնագիտական պատրաստվածությունը և բարոյական հատկանիշները բավարար չեն վերոնշյալ մասնագիտական գործառույթները իրականացնելու համար:



Դատավորը խոսող օրենք է, իսկ օրենքը՝ համը դատավոր:

ՅԻՅԵՐՈՆ

### ՓԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԵՐԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

(ՄԱՍ ԵՐԿՐՈՐԳ)

Ընդհանրապես, փաստաբանների մասնագիտական կազմակերպությունների առաքելությունը և խնդիրները շատ որոշակի են և կոչված են ապահովելու փաստաբանների իրավունքների և շահերի պաշտպանությունը, նրանց շարունակական մասնագիտական կրթության ապահովումը, մասնագիտական վարքագծի կանոնների սահմանումը և դրանց պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, իրավաբանական օգնության մատչելիության ապահովումը և այլն: Այս խնդիրներն էլ հիմնականում ամրագրված են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում և Փաստաբանների պալատի կանոնադրությունում:

Սակայն, այդ կարևոր խնդիրներով հանդերձ, ըստ իս, փաստաբանների մասնագիտական կազմակերպությունը ունի այլ, ավելի գլոբալ խնդիրներ ևս, որոնք կընդգծեն նրա դերը ոչ միայն փաստաբանության, այլև ամբողջ դատաիրավական համակարգում: Խոսքը վերաբերում է այնպիսի խնդիրներին, ինչպիսիք են համակողմանի աջակցությունը արդարադատության համակարգի և ընդհանրապես դատաիրավական համակարգի՝ հասարակության գիտակցությանը և կարիքներին ադեկվատ բարեփոխումներին, աջակցությունը իրավունքի գերակայությանն ու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, ժողովրդավարությունն ու ազատ տնտեսական հարաբերություններն

ապահովող օրենսդրության ընդունմանը, հասարակական գիտակցության բարձրացմանը դեպի իրավունքի, օրենքի նկատմամբ հարգանքը և անկախ իրավաբանական մասնագիտության դերն ու նշանակությունը: Այսպիսի խնդիրների իրականացման կամքն ու ունակությունները, անկասկած, կմեծացնեն փաստաբանության ինստիտուտի դերն արդարադատության համակարգում և հասարակության վստահությունը փաստաբանի մասնագիտության հանդեպ:

Ներկազմակերպական խնդիրներից բացի այլ, ավելի գլոբալ խնդիրների առաջադրումը և իրականացումը հնարավոր կլինի փաստաբանության ինստիտուտը ինտենսիվ թերապիայով բուժելով՝ նրան ներարկելով մասնագիտական հրաշալի գիտելիքներ, համապատասխան կամք և ձևավորված մտածելակերպ ունեցող իրավաբաններով, որոնք պետք է դուրս մղեն



խորհրդային ոճն ու գործելակերպը, ինչպես նաև ներկա արատավոր դատաիրավական համակարգին դաշնակցած կամ առնվազն դրա հետ հաշտված ու մերված զանգվածը: Արդի իրավական մշակույթի ներդրմամբ տոգորված այդպիսի կառույցը, իր անդամներով, գործելակերպով և գաղափարներով շահեկանորեն տարբերվելով դատաիրավական համակարգի մյուս ինստիտուտներից, լոկոմոտիվի դեր կստանձնե իրական բարեփոխումների քաղաքական կամք ձևավորելու և իրավական պետությունների եվրոպական ընտանիքում Հայաստանի տրամաբանական և անայլընտրանք տեղը ապահովելու գործում:

ՀՀ Փաստաբանների պալատի անդամ,  
*փաստաբան Գ. Արզարյան*



Փաստաբանական պրակտիկա

ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ԵՎՍ ՄԵԿ ՓՈՒԼ



Դատաիրավական բնագավառում օրենսդրական բարեփոխումների հայեցակարգի նպատակով ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծված աշխատանքային խմբի աշխատանքների առաջին փուլի ավարտման կապակցությամբ խմբի ղեկավար, ՀՀ արդարադատության նախարար Դ.Հարությունյանը հանրությանն է ներկայացրել դատաիրավական բնագավառի օրենսդրական բարեփոխումների հայեցակարգը:

**ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ**

Ըստ բարեփոխումների հայեցակարգի՝ դատական համակարգի ստորին օղակը կազմելու են մագիստրատների առաջին ատյանի դատարանները, որոնք քննելու են ոչ բարդ քաղաքացիական և քրեական գործեր, գործելու են Երևան քաղաքի համայնքներում և մարզերում: Նախատեսվում է, որ նման դատարանները բավական շատ կլինեն, որպեսզի մոտ լինեն բնակչությանը՝ ըստ նրանց բնակության վայրի: Որոշակի քանակի քաղաքացիական և քրեական դատարանները, որոնք գործելու են մեկ դատարան՝ մի քանի մարզի համար սկզբունքով, քննելու են նաև ավելի բարդ քաղաքացիական և քրեական գործեր: Հավանաբար, նման դատարաններից կլինեն չորսական կամ հինգական: Փաստորեն՝ ներկա առաջին ատյանի դատարանների փոխարեն ստեղծվելու են երկու տեսակի առաջին ատյանի դատարաններ:

**ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ**

Փոփոխվելու է նաև վերաքննիչ դատարանի կառուցվածքը: Ապագա վերաքննիչ դատարանը փաստացի կփոխարինի ներկա վճռաբեկ դատարանին և կստանձնի նրա լիազորությունները: Վերաքննիչ դատարանն իր իրավասության սահմանում վերաքննիչ բողոքի սահմաններում կվերանայի ընդհանուր իրավասության և անվճարունակության դատարանների գործն ըստ էության լուծող դատական ակտերը, իսկ օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում՝ միջանկյալ դատական ակտերը: Վերաքննիչ բողոք բերելու հիմքերն են միայն դատական սխալը և նոր երևան եկած հանգամանքները: Գործի քննությունը, որպես կանոն, պետք է ավարտվի վերաքննիչ ատյանով: Դատական սխալի հիմքով բողոք բերելու դեպքում վերաքննիչ բողոքում պետք է անպայման հիմնավորվի դատական սխալի առկայությունը: Բացառությամբ օրենքով սահմանված սպառնիչ դեպքերի՝ վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված համարված փաստական հանգամանքները չեն կարող փոխվել: Վերաքննիչ դատարանը իրավունք չունի ևս մեկ անգամ գնահատելու առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցները: Վերաքննիչ դատարանը իրավունք ունի առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա հաստատված համարի նոր փաստը (կամ հաստատված չհամարի առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված համարված փաստը) և կայացնի նոր դատական ակտ: Իրավունքի հարցում վերաքննիչ դատարաններն անկաշկանդ են և կարող են գործն ըստ էության լուծող նոր ակտ կայացնել, վերացնելով առաջին ատյանի ակտը, ինչպես նաև գործն ուղարկել առաջին ատյանի դատարան:

**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վճռաբեկ դատարանի գործունեության նպատակն է ապահովել օրենքի ճիշտ մեկնաբանությունը և նպաստել իրավունքի զարգացմանը: Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե տվյալ գործով կայացված դատական ակտը էականորեն կարող է ազդել դատական պրակտիկայի վրա, կամ վերանայող դատական ակտը հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված որոշմանը, կամ ստորադաս դատարանի կողմից թույլ տրված դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյուքնում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետևանքներ: Վճռաբեկ դատարանի յուրաքանչյուր մասնագիտացված պալատ քննելու է վճռաբեկ բողոքի ընդունելության հարցերը՝ նշանակելով գործով զեկուցող, սակայն գործի քննությունը իրականացվելու է վճռաբեկ դատարանի երկու պալատների կազմով ընդհանուր նիստում: Վճռաբեկ դատարանը գործը պետք է քննի վճռաբեկ բողոքի սահմաններում, որի բերելու համար հիմք է դատական սխալը: Ըստ փոփոխությունների՝ վճռաբեկ բողոքները ներկայացնելու իրավունք ունեն ՀՀ գլխավոր դատախազը, նրա տեղակալները, փաստաբանները, գործին մասնակցող կողմերը:

ՀՀ-ում կգործեն վարչական և անվճարունակության գործերով մասնագիտացված դատարաններ: Դատական համակարգում կիրականացվի դատական ծառայություն՝ դատական ղեկարարամենտի միջոցով: Դատական կորպուսի համալրման նպատակով կձևավորվի դատական դպրոցը:

«Իրավաբանական Լրատու»-ի խմբագիր Ն. Կարապետյան

**Դատական համակարգ**

ԳՐԱՐՔՈՒՄ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՄԵԶԱՆՈՒՄ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ԽՈՐԱՆՈՒՄ Է»

Վերջին տարիներին իրականացվող դատաիրավական բարեփոխումները, թվում էր, լուրջ նախապայմաններ կստեղծեն հասարակության իրավական իրազեկության առումով: Սակայն այդ բարեփոխումները դատարանների շենքերի բարեկարգումից այն կողմ չանցան, և իրավական դաշտի վերլուծությունը ցույց է տալիս, որ հասարակության իրավական իրազեկության մակարդակը բավականին ցածր է: Մինչդեռ միայն սեփական իրավունքների լավ իմացությունն է հնարավորություն տալիս պայքարելու դրանց պաշտպանման համար: Այս և այլ հարցերի շուրջ է մեր գրույցը Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի նախագահ, փաստաբան Կարեն Զադոյանի հետ:

- Հայաստանի բնակչության իրավական իրազեկության մակարդակը բավականին ցածր է, և դա ունի մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ,- ասում է Կ. Զադոյանը,- Ցածր է հատկապես մարզերում և գյուղական համայնքներում բնակվողների իրավական իրազեկության մակարդակը: Հայաստանում ցածր է նաև իրավունքների պաշտպանության մակարդակը: Հիմնական պատճառը ցածր իրավագիտակցությունն է: Մարդիկ պետք է իմանան իրենց իրավունքները, որպեսզի կարողանան դրանք կամ իրենք պաշտպանել, կամ էլ, եթե կարիք ունեն մասնագիտական իրավաբանական օգնության, կարողանան դիմել և օգտվել այդ ծառայություններից:

Կան նաև սուբյեկտիվ պատճառներ, որոնք նպաստում են իրավագիտակցության ցածր մակարդակին: Դրանցից են դատական համակարգում առկա բարձր կոռուպցիոն ռիսկերը: Այդ պատճառով է նաև, որ վերջերս դատարանների նախագահների խորհուրդն ընդունեց դատական համակարգի հակակոռուպցիոն ծրագիրը, որի հիմնական նպատակը համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցումն է:

Մյուս կարևոր հանգամանքը փաստաբանական ինստիտուտի ոչ կատարյալ լինելն է: Այսօր փաստաբանական ինստիտուտն ամբողջովին իր դերը չի կատարում: Այն նախկինից ժառանգած շատ վատ սովորություններ ունի: Խոսքս վերաբերում է նրան, որ փաստաբանների մեծ մասն այսօր միջնորդական ծառայություններ է մատուցում իրավաբանական ծառայությունների փոխարեն և մինչև վերջ չեն պայքարում իրենց վստահողների իրավունքների պաշտպանության համար: Այդուհանդերձ կան լուրջ փաստաբաններ, ովքեր պայքարում են մարդկանց իրավունքների պաշտպանության համար, և մենք հույս ունենք, որ այդ կարող ուժերով հնարավոր կլինի բարեփոխել փաստաբանական ինստիտուտը:

Վերջին տարիներին մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում լուրջ քայլ կատարվեց. ներդրվեց մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը: Բայց դեռևս երկար ժամանակ է անհրաժեշտ, որպեսզի այն կայանա և կարողանա իր խնդիրներն ու նպատակները լուծել:

Ինչ վերաբերում է իրավական իրազեկությանը, ապա ասեմ, որ այս ուղղությամբ պետությունը որոշ քայլեր ձեռնարկում է: Առանձնացնենք Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգը, որը Համաշխարհային բանկի վարկային միջոցներով իրականացվեց և այժմ ինտեգրացիոն համացանցում դրված է, ու ցանկացողները կարող են օգտվել: Սակայն հաշվի առնելով, որ Հայաստանում ինտեգրացիոն օգտվողների թիվը շատ քիչ է, պետք է ասենք,

որ այն իրազեկության խնդիրը մասնակիորեն է լուծում:

- Չե՞ք կարծում, որ եթե մարդիկ հավատային, որ իրենց իրավունքները կպաշտպանվեն, շահագրգիռ կլինեին իրավական գիտելիքների ձեռքբերման հարցում:

- Կարծում եմ միայն իրազեկ քաղաքացին կարող է իր իրավունքներն արդյունավետ պաշտպանել: Մարդիկ ուղղակի դատապարտված են սեփական իրավունքներն իմանալուն: Երբ գիտես քո իրավունքները, դրանք ավելի հեշտ կարող ես պաշտպանել: Այլ հարց է, որ, իրոք, այսօրվա դատական համակարգի վիճակը տեսնելով՝ անձը երաշխավորված չէ, որ կարող է դրանք պաշտպանել: Ես վստահ եմ, որ մի քանի տարվա ընթացքում, կարելի է լուրջ բարեփոխումներ անել ու հասնել նրան, որ վերջնականապես կարողանանք սեփական իրավունքները պաշտպանել: Բարեփոխումներ ասելով՝ նկատի չունեմ միայն դատարանների շենքային պայմանները, դատավորների հագուկապը: Խոսքը վերաբերում է դատարանների կողմից օրենքների անշեղ կատարմանը: Այսինքն՝ պետք է բոլորս վստահ լինենք, որ ՀՀ դատարաններում իրոք իրականացվում է արդարադատություն:

- Վերջին մի քանի տարիներին պետական մակարդակով պայքարում ենք կոռուպցիայի դեմ: Տեղաշարժ նկատո՞ւմ եք, թե՞ ասեն ինչ մնացել է նույնը:

- Կա հակակոռուպցիոն ռազմավարության ծրագիր, ստեղծվեց մոնիտորինգի հանձնաժողով, որն ուներ տարբեր խմբեր: Դրանց մեջ ընդգրկված էին նաև մեր կազմակերպության անդամները: Այդ խմբերում հիմնականում ծանոթանում էինք տարբեր օրինագծերի, այսինքն՝ նման խմբերը ավելի շատ տեսական հարթության վրա են գործում և կոռուպցիայի դեմ պայքարում որևէ դեր չունեն: Բայց որ կոռուպցիան մեզանում կա և աստիճանաբար խորանում է, փաստ է:

- Ի վերջո՞ կաշառք տվողն էլ նույն քաղաքացին է:

- Համաձայն եմ: Այն տեսակետը կա, որ կաշառք չտան, վերցնող էլ չի լինի: Ես ինչ-որ տեղ համաձայն եմ այդ ձևակերպմանը: Կարծում եմ՝ քաղաքացին ոչ միայն պետք է իմանա իր իրավունքների մասին, այլև պայքարի դրանց համար, կարողանա իր իրավունքներն իրացնել և ոչ թե կաշառքով, զարտուղի ճանապարհով իր հարցերը լուծի: Չէ՞ որ այդպիսով նրանք վարկաբեկում են դեռ կայացող դատական, փաստաբանական համակարգերը:

ՆՈՒՅՆԱԿԱՆ ԵՆ ԱՐԳՅՈՔ «ՕՐԵՆՔԻ ՎՐԱ» ԵՎ «ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ» ՀԱՍԿԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԵՐԼՈՒԾԱՆԱԿ



Հասարակական հարաբերությունների պատշաճ կարգավորման, արդարադատության արդյունավետ իրականացման և մարդու իրավունքների լիարժեք պաշտպանության գործում կարևոր նշանակություն ունի իրավական դրույթների պարզությունն ու հստակությունը, դրանց ճիշտ ընկալումն ու մեկնաբանումը: Պատահական չէ, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ իրավական ակտերի լեզուն պետք է լինի պարզ, հ տակ և մատչելի: Իրավական ակտերում չի թույլատրվում հնացած և բազմիմաստ բառերի ու արտահայտությունների, պատկերավոր համեմատությունների, այլաբանությունների, չափազանցությունների, փոխաբերական իմաստով բառերի կամ արտահայտությունների, թաքցնված ենթատեքստերի, ինչպես նաև տարալեզու տերմինների անհարկի գտագործումը: Իրավական ակտում բազմիմաստ բառ գտագործվելու դեպքում պետք է ահմանվի, թե բառը որ իմաստով է գտագործվում:

Իրավական դրույթների պարզության և դրանց ճիշտ ընկալման տեսանկյունից անհրաժեշտ ենք համարում քննարկել «օրենքի հիման վրա» և «օրենքով սահմանված կարգով» հասկացությունների տարբերությունն ու դրանց հարաբերակցությունը: Այսպես, երբ որևէ օրենքում օգտագործվում է «օրենքի հիման վրա» հասկացությունը, ապա ի նկատի է ունեցվում, որ, ելնելով կարգավորվող հարաբերության մի շարք էական առանձնահատկություններից, այն պետք է կարգավորվի միայն օրենքով՝ լինելով առավել կարևոր, բնորոշ և կայուն հա արակական հարաբերություն: Այսինքն՝ «օրենքի հիման վրա» ձևակերպումը խիստ սահմանափակում է որևէ այլ կերպ այդ հարաբերությունը կարգավորելու հնարավորությունը, քանի որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այն կարգավորելու համար անհրաժեշտ է Ազգային ժողովի կողմից ընդունել օրենք՝ որպես տվյալ հարաբերությունը կարգավորող միակ իրավական հիմք: Ինչ վերաբերում է «օրենքով սահմանված կարգով» եզրույթին, ապա ակնհայտ է, որ այստեղ խոսքը գնում է այնպիսի մի օրենքի մասին, որն ամրագրում է նախատեսված հարաբերությունները կարգավորելու կարգը: «Օրենքով սահմանված կարգով» տերմինի օգտագործմամբ օրենսդիրը պարտավորություն է ստանձնում առանձին օրենքով մանրամասն սահմանել նաև համապատասխան հարաբերությունների կարգավորման կարգն ու պայմանները: Այսինքն՝ եթե որևէ օրենք որոշակի հարաբերություններ կարգավորելու նպատակով հղում է կատարում մեկ այլ օրենքի վրա՝ օգտագործելով «օրենքով սահմանված կարգով» ձևակերպումը, նշանակում է՝ այդ հարաբերությունների մանրամասն կարգավորումը թողնված է օրենքին: Ընդ որում, վերջինը պետք է սահմանի այն կարգը, որով կկարգավորվի այդ հարաբերությունը: Քննարկվող հասկացությունների տարբերությունը առավել ամբողջական և համապարփակ ձևով պարզաբանել է ՀՀ

Սահմանադրական դատարանը՝ հասարակության կամ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին իր առանձին որոշումներում: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանի 1998 թ.-ի փետրվարի 27-ի թիվ 92 որոշման 6-րդ կետի 4-րդ մասի համաձայն, «օրենքի հիման վրա» ա ելով, պետք է նկատի ունենալ ոչ թե նորմատիվ իրավական ակտ, որը կարգավորում է անձի եփականության տարման կազմակերպական և իրավական գործընթացն ընդհանրապես , այլ ընդ, որով իրականացվում է եփականության տարումը: Բացի դրանից, ՀՀ Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ 2006 թ.-ի ապրիլի 18-ի թիվ 630 որոշմամբ ամրագրել է, որ օրենքը պետք է ահմանի հա արակության և պետության կարիքների համար եփականության տարման կարգը, որոշակիացնելով՝ ա) տարելու մա ին որոշում կայացնող պետական մարմինը, բ) տարվող եփականության դիմաց նախնական համարժեք փոխհատուցման ապահովման կարգը, գ) գույքն տարելու մա ին որոշման բողոքարկման, ինչպես նաև հատուցման գնի, ժամկետների, այլ համարժեք փոխհատուցում տալու և դրանց հետ կապված մյու պայմանների շուրջ համաձայնության չգալու դեպքում գույքի տարման կարգը և այլն: Այսպիսով՝ «օրենքի հիման վրա» և «օրենքով սահմանված կարգով» հասկացությունների միջև կա էական տարբերություն և դրանք մեկը մյուսի փոխարեն կիրառելը կամ որպես հոմանիշներ օգտագործելը, մեր կարծիքով, սխալ է:

Լյուդվիգ Դավթյան  
ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի  
մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող

Իրավաբանական կրթություն



### ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՊԱՅՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՄԱՆ ԳԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՈՐՈՇ ՎՊԱՅԵՐ

Ապացուցումը յուրաքանչյուր դատավարության կողմից ու հիմքն է հանդիսանում, քանի որ ցանկացած վեճի արդարացի լուծումը կախված է նաև ապացուցման պարտականությունը կողմերի միջև ճիշտ բաշխելու կարողությունից: Պատահական չէ, որ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածում օրենսդիրը նախատեսել է դրույթ, ըստ որի, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները:

Սակայն կան դեպքեր, երբ ապացուցման պարտականության ծանրությունը դրվում է պատասխանող կողմի վրա: Այդպիսի դեպքերից օրենսդիրը առանձնացրել է հետևյալ քաղաքացիական գործերը՝

ա) անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության հայցերով վեճերը, երբ տարածած տեղեկատվության ճշմարտացիության ապացուցման պարտականությունը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն, դրված է պատասխանող կողմի վրա,

բ) պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու դիմումներով վեճերը, երբ ակտն ընդունելու համար հիմք ծառայած ապացուցման պարտականությունը դրվում է ակտն ընդունած մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վրա, ՀՀ Քաղ.դատ. օր. 162-րդ հոդվածի 6-րդ կետ:

Այս համատեքստում վերլուծենք աշխատանքային վեճի լուծման մեկ դեպք դատական պրակտիկայից:

2005թ.-ի դեկտեմբերի 5-ին «ԱրմենՏեյ» ընկերության աշխատակից Արմեն Աբրահամյանը գործատուի կողմից ծանուցվել էր փորձաշրջանի անբավարար արդյունքի պատճառով 2005թ. դեկտեմբերի 9-ից աշխատանքից ազատվելու մասին: Այնուհետև՝ 08.12.2005թ. Ա. Աբրահամյանը ստացել N504-Կ աշխատանքից ազատման հրամանը: Մեկամսյա ժամկետի պահպանմամբ՝ աշխատողի կողմից հայց էր ներկայացվել դատարան՝ 08.12.2005թ. թիվ 504-Կ աշխատանքից ազատման հրամանը անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապորդի գումարը վճարելու պահանջի մասին: 2006թ. մարտի 15-ին Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի և 2006թ. հունիսի 2-ին ՀՀ Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանները վճռել էին հայցը մերժել՝ այն անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Երկու ատյանն էլ հայցի մերժումը պատճառաբանել էին նրանով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասը չի նախատեսում գործատուի պարտավորությունը՝ մինչև նախատեսված աշխատանքում (պաշտոնում) աշխատողի համապատասխանության վերաբերյալ հետևության գալը աշխատողին ներկայացնել սահմանված փորձաշրջանի ընթացիկ արդյունքները կամ առաջադրված պահանջներից նրա չհամապատասխանելը հիմնավորող փաստեր: Դատարանները նշել էին նաև, որ պատասխանողի կողմից ներքին կարգապահական կանոնները և աշխատանքային պայմանագրի 13-րդ հոդվածը խախտելը չի կարող հիմք հանդիսանալ պատասխանողի հրամանը անվավեր ճանաչելու համար, քանի որ ինչպես ներքին իրավական ակտով, այնպես էլ ՀՀ Աշխատանքային օրենսգրքով մնան հետևանք նախատեսված չէ:

Տվյալ պարագայում դատարանների կողմից հաշվի չէր առնվել, որ գործատուի նախաձեռնությամբ Ա. Աբրահամյանին աշխատանքից ազատման հրամանի հիմքում դրվել է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, որը հստակ սահմանում է փորձաշրջանի անբավարար արդյունքների առկայությունը՝ որպես աշխատանքից ազատման իրավական հիմք, դրանով իսկ անտեսելով դատավարությունում

կիրառվող ապացուցողական կանխավարկածը, ըստ որի, փորձաշրջանի ընթացիկ արդյունքները համարվում են բավարար, քանիդեռ գործատուն դատաքննության ընթացքում չի ապացուցում փորձաշրջանի անբավարար արդյունքների առկայությունը: Միաժամանակ դատարանը անտեսել էր պատասխանող ընկերության ներքին կարգապահական կանոնների 4.5.2.3. կետը, ըստ որի, փորձաշրջանի ավարտից հետո առնվազն 2 շաբաթ առաջ, բայց ոչ ուշ քան երեք օր առաջ անմիջական ղեկավարը կադրերի վարչության պետի հետ պետք է աշխատակցի հետ անցկացնել գնահատման հանդիպում՝ համապատասխան Գլխավոր տնօրենի հետ նախնական քննարկումներից և վերջինիս համաձայնությունից հետո:

Բացի այդ՝ դատարանը հաշվի չէր առել, որ պատասխանողը գործի քննության ընթացքում չէր ներկայացրել որևէ ապացույց, որը կհիմնավորեր նշված հրամանը արձակելու համար հիմք ծառայած հանգամանքները, ավելին՝ պատասխանողը իր տրամադրության ներքո չուներ նույնիսկ փորձաշրջանի ընթացիկ արդյունքները (բավարար կամ անբավարար), որպիսիք նա պետք է ունենար՝ համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ հոդվածի: Տվյալ պարագայում ակնհայտ է դառնում, որ 08.12.2005թ. թիվ 504-Կ աշխատանքից ազատման հրամանը չի կարող համարվել օրինական՝ անկախ դրա ընթացիկ արդյունքները գործատուի կողմից աշխատողին կամ այլ անձին ներկայացնելու հանգամանքից, որն էլ դատարանները վկայակոչել էին իրենց վճիռների պատճառաբանական մասում:

Այսպիսով՝ վերը նշված քաղաքացիական գործով դատական երկու ատյանն էլ, խախտելով ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի և Աշխատանքային օրենսգրքի մի շարք հոդվածներ, թույլ էին տվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտում:

Տվյալ գործի փաստական հանգամանքների բացակայության և իրավական հիմքի առկայության արդյունքում 2006թ. հուլիսի 28-ին ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատը որոշեց բավարարել վերը նշված քաղաքացիական գործով բերված վճռաբեկ բողոքը և բեկանեց 2006թ. հունիսի 2-ին կայացրած ՀՀ Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի վճիռը՝ այն ուղարկելով նույն դատարան՝ այլ կազմով քննելու համար:

Այսպիսով՝ վերը նկարագրված քաղաքացիական գործի դատական պրակտիկան հիմք է տալիս եզրակացնելու, որ աշխատանքային վեճերով, մասնավորապես աշխատանքում վերականգնելու հայցերով գործատուի նախաձեռնությամբ աշխատողին ազատելու իրավական հիմքերի ապացուցման պարտականության ծանրությունը պետք է դրվի գործատուի վրա:

**Օրենսդրություն**

ՀՀ Փաստաբանների պալատի անդամ,  
փաստաբան Լ. Հարությունյան

ՀԱՄԱՌՈՑ ԱՆԳՐԱԳԱՐԶ

**ԻՐԱՎԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ԲԻԻՏԱՆԻԱՅՈՒՄ**

(ՄԱՍ ԵՐԿՐՈՐԳ)

Վարձու սոլիսիթորները Սոլիսիթորների մոտ 10%-ը աշխատում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կամ մասնավոր առևտրային ընկերություններում, որոնք ունեն իրավաբանական ստորաբաժանումներ: Վարձու սոլիսիթորները ունեն մասնագիտական նույն կարգավիճակը և համարվում են լիովին անկախ իրավաբաններ: Նրանք պարզապես տարբերվում են այն բանով, որ աշխատում են միայն մեկ վստահորդի՝ իրենց գործատուի համար:

Ընդհանուր պրակտիկա - Ընդհանուր պրակտիկայով զբաղվող սոլիսիթորները աշխատում են համայնքներում՝ աջակցելով հանրության իրավական խնդիրների լուծմանը: Սակայն նրանք կապված չեն որևէ կոնկրետ դատարանի հետ և կարող են գործել Անգլիայի և Ուելսի ամբողջ տարածքում: Ընդհանուր պրակտիկայի սոլիսիթորները հիմնականում զբաղվում են անշարժ գույքի գործարքների, ժառանգության, վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունների, ընտանեկան իրավունքի վերաբերյալ հարցերով: Նրանք վերոնշյալ, ինչպես նաև քրեական գործերով իրենց վստահորդների շահերը ներկայացնում են նաև դատարաններում: Նրանք նաև հանդես են գալիս որպես տնտեսական իրավունքի խորհրդատուներ այնպիսի հարցերով, ինչպիսիք են աշխատանքային իրավահարաբերությունները, պայմանագրերը,



ընկերությունների ստեղծումն ու գրանցումը, մրցակցային օրենսդրությունը և այլն:

**Բիզնես խորհրդատուներ** - Իրավաբանական խորհրդատվական ծառայությունների մատուցումից բացի՝ սոլիսիթորները վստահելի խորհրդատուներ են, որոնց վրա կարելի է հենվել տնտեսական գործեր վարելիս: Երկար ժամանակ նույն վստահորդի հետ աշխատանքի փորձը հնարավորություն է տալիս մասնագիտանալ այլ ոլորտներում ևս, օրինակ՝ հարկային և ֆինանսական հարցերը, անշարժ գույքի ձեռքբերումը հիփոթեքային վարկավորմամբ, կտակի հետ կապված հարկային խնդիրները և այլն: Բիզնեսի խորհրդատու սոլիսիթորները համարվում են տեղի բիզնես համայնքի կարևոր մասը և լավ հարաբերություններ ունեն բանկերի, ֆինանսիստների, հաշվապահների հետ: Այն դեպքերում, երբ նրանք անկարող են օգնել վստահորդին, ապա կարողանում են գտնել նրան, ով կարող է օգտակար լինել:

**Մասնագետներ** - Եթե շատ ֆիրմաներ առաջարկում են իրավաբանական համապարփակ ծառայություններ՝ ներառելով իրավունքի գրեթե բոլոր ճյուղերը, ապա աստիճանաբար շատանում են այն անհատ սոլիսիթորների և ֆիրմաների թիվը, որոնք մասնագիտանում են մեկ կամ դրան հարակից իրավունքի ճյուղերում՝ դառնալով իրավունքի այդ ճյուղի փորձագետներ: Սա մասնավորապես տարածված է այն ֆիրմաներում, ովքեր աշխատում են բիզնեսի ոլորտի վստահորդների հետ: Նեղ մասնագիտացումը ընդգրկում է բանկային, կորպորատիվ, առևտրային, շինարարության, ապահովագրության, մտավոր սեփականության, հարկային, մրցակցային, առևտրային նավագնացության և արբիտրաժային իրավունքները:

**Առևտրային փորձաքննություն** Միացյալ Թագավորության պատմական դերը՝ որպես համաշխարհային առևտրի և ֆինանսների կենտրոն, հանգեցրել է նրան, որ սոլիսիթորները բավականին մեծ փորձ են կուտակել միջազգային գործարքների ոլորտում: Դարերի ընթացքում բուռն զարգանալով՝ անգլիական առևտրային իրավունքը ներկայումս միջազգային պայմանագրերի և գործարքների ժամանակ հաճախակի է ընտրվում որպես կիրառելի օրենք, անգամ եթե այդ գործարքները որևէ առնչություն չունեն Անգլիայի կամ Ուելսի հետ: Լոնդոնի առևտրային

դատարանում քննվող գործերի 80%-ը հարուցվում է օտարերկրյա գործարքների մասնակիցների կողմից: Սոլիսիթորները, օգտագործելով այդ հանգամանքը, ինչպես նաև այլ հանգամանքներ, ինչպես օրինակ անգլերեն լեզուն, որը դարձել է միջազգային բիզնես համայնքի կողմից օգտագործվող լեզու, պատմական կապերը, որոնք ձևավորվել են Անգլիայի և ԱՄՆ-ի, Կանադայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի և Հոնգ Կոնգի միջև, ինչպես նաև այն, որ Անգլիական իրավունքը հանդիսանում է ընդհանուր իրավունքի իրավական համակարգի հիմքը, հանդես են գալիս որպես պահանջված իրավական խորհրդատուներ և փորձագետներ՝ տարբեր միջազգային գործարքների կնքման ժամանակ:

**Եվրոպական Միություն** - Եվրոպական միության օրենսդրությունը, հանդիսանալով Միացյալ Թագավորության օրենսդրության բաղկացուցիչ մասը, աստիճանաբար տարածվում է տարբեր ոլորտների վրա, օրինակ՝ տնտեսական մրցակցություն, շրջակա միջավայրի պաշտպանություն, մտավոր սեփականություն՝ նոր իրավունքներ պարզելով անհատ քաղաքացիներին: Եվրոպական միության անդամ չհանդիսացող երկրների վստահորդների համար սոլիսիթորները խորհրդատվության հարմար աղբյուր են նոր իրավունքների, ազատությունների և բիզնես հնարավորությունների վերաբերյալ: Այսպիսի ծառայություններ մատուցելու նպատակով սոլիսիթորները մշտապես յուրացնում են այն օրենսդրությունը և որոշումները, որոնք ընդունվում են Եվրոպական միության կենտրոնականում՝ Բրյուսելում և Լյուքսեմբուրգի Եվրոպական դատարանում:

Որպեսզի Եվրոպական իրավունքի ոլորտում վստահորդներին իրավաբանական ծառայությունների մատուցումը դյուրացվի, մոտավորապես 40 անգլիական սոլիսիթորական ֆիրմաներ գրասենյակներ են բացել Բրյուսելում՝ մասնագիտանալով Եվրոպական միության իրավունքի ոլորտում:

ՀՀ Վճռաբեկ դատարանի դատավորի օգնական, *իրավաբան Լ. Աբգարյան*

**Միջազգային պրակտիկա**

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ**

**ՆԵՏԱՔՐՔՐԻ Է ԻՄԱՆԱԼ**

Վաղնջական ժամանակներում արքայի հորինած երգերը գրադատելու համար քննադատին բանտ են նետում: Պատժի ժամկետը լրանալուց հետո խեղճ քննադատը նորից է հրավիրվում «նորին մեծություն» հեղինակի մոտ:

- Դե, սիրելիս, այս անգամ ի՞նչ կասեք իմ ստեղծագործության մասին, - հարցնում է արքան:
- Քննադատը խոր հոգոց հանելով՝ դառնում է արքային և ասում.
- Չե՛րդ մեծություն, խնդրում եմ կրկին բանտարկել ինձ:

1885 թվականին Օսլոյում վախճանվեց Նիկոլսոն անունով մի փաստաբան: Երբ նոտարի ներկայությամբ բացեցին կտակը, որդիները զարմանքից քարացան: Իր ողջ կարողությունը պատվարժան փաստաբանը թողել էր հեծանիվներ գնելու և դրանք երեխաներին նվիրելու նպատակին:

Դատավոր - Դուք դատված եղե՞լ եք:  
Ամբաստանյալ - Այո, պարոն դատավոր: Մի անգամ Բայց այդ եղել է իմ փաստաբանի թույլ որակավորման պատճառով և ոչ իմ մեղքով:  
Դատավոր Պատահում է Կարեկցում եմ ձեզ:  
Ամբաստանյալ Չարժե, պարոն դատավոր, այն ժամանակ իմ փաստաբանը դուք էիք:

- Օ՛, ես ձեր մասին այնքան եմ լսել, պարոն Պետրոսյան, - բացականչեց օրիորդը, երբ հյուր եղած ժամանակ նրան ներկայացրեցին համայնքային դատավորին:
- Հնարավոր է, օրիորդ, - պոռթկումով բղավեց նա,
- միայն այդ բոլորը պետք է ապացուցել:

1981թ.-ին Գրիգորյանը Էջմիածինը փոխանակել է Աբովյանի հետ, բայց ներկայումս ապրում է Երևանում:

(բացատրությունից)

Մոլլա Նասրեղինի՝ դատավոր եղած ժամանակ մի օր հարևանը գալիս և ասում է.

- Չեր չալ կովը մեր կովին կոտոշահարել ու սատկացրել է: Ըստ Շարիաթի ի՞նչ պետք է անել:

Մոլլան պատասխանում է.

- Այ եղբայր, դա անասուն է, խելքը չի կտրում, նրա կատարած հանցանքի համար ոչինչ չենք կարող անել:

Այդ խոսքի վրա հարևանը թե՛

- Ճիշտն ասած, սատկող կովը ձերն էր, ես հակառակն ասացի:

Մոլլա Նասրեղինը տեղից վեր է թռչում.

- Այ, տեսնու՞մ ես, գործի բնույթն այժմ փոխվում է: Սպասիր՝ տեսնենք սև կազմով այս գիրքն ի՞նչ է ասում:

«Մեղադրյալը իր կնոջը ծեծել է բռունցքով, մուրճով և այլ քրեական գործի նյութերով»:  
(դատավճռից)

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ**

Հեռ.՝ (374 10) 54-01-99  
Ֆաքս՝ (374 10) 58-02-99  
Էլ.փոստ՝ ega e e e @a a.a

Լրատվական գործունեություն իրականացնող՝

**«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ**

Հասցե՝ ք. Երևան,  
Նալբանդյան 7, բն. 2

Պետական գրանցման վկայականի համարը՝

03Ա 057970, տրված՝ 27.12.2002 թ.

**Թողարկման պատասխանատու և խմբագիր, Նարինե Կարապետյան**

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒՆ»  
ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

Տպաքանակը՝ 500 օրինակ  
Ծավալը՝ 1 տպ. մասով  
Ստորագրված է տպագրության 31.07.2006թ.